



ԻՆՉՈՒ՞ՊԵՏՔ Է ԴՐՈՆԻ ՕՊԵՐԱՏՈՐԸ ԳԻՏԵՆԱ ԱԿԱՆԱՊԱՅԹՈՒՆԱՅԻՆ ԳՈՐԾԸ

Ժամանակակից մարտական անօդաչու թռչող սարքերը, հատկապես FPV-երը, դարձել են նպատակակետերի խոցման հիմնական գործիքը: Բայց անօդաչու թռչող սարքն ինքնին միայն կրող է՝ հիմնական տարրը մարտական բեռնվածությունը: Հենց դա է, որ սարքը մահացու վտանգավոր է դարձնում: Հետևաբար, օպերատորը, ով վերահսկում է անօդաչու թռչող սարքը և այն լիցքավորում է, պարտավոր է իմանալ պայթեցման գործի հիմունքները: Ստորև մենք կվերլուծենք, թե ինչու է դա կարևոր:

Զինամթերքի կառուցվածքի իմացությունը

Դրոնների մեծ մասում նպատակակետերն ոչնչացնելու համար օգտագործում են ինչպես հաստիքայի բեկորային և կոմուլյատիվ միջոցներ, այնպես էլ ինքնաշեն պայթուցիկ սարքեր:

Օպերատորը պետք է հստակ գիտենա.

- պայթուցիկ նյութերի ինչ տեսակներ կան (ՏԷՆ, տրոտիլ, ամոնիտ և այլն);
- ինչ պայմաններ են անհրաժեշտ դրանց գործարկման համար;
- ինչպես է աշխատում ճայթիչը, պայթուցիչը, կասեցումը:

Առանց այս գիտելիքների իմացության անհնար է գրագետ պատրաստել մարտական մասը: Միավր կարող է հանգեցնել կամ ճայթունացման (детонация) չառաջացմանը (նպատակակետը կմնա անվնաս), կամ վաղաժամ պայթյունի՝ արդեն գետնին, կամ էլ կարող է հանգեցնել ճայթունացման՝ զինամթերքի տեղադրման ժամանակ (հաճախակի դեպքեր):

Ոչնչացման արդյունավետության բարձրացումը

Գրագետ օպերատորը լիցքը պարզապես «աչքաչափով» չի նետում. նա ընտրում է ճիշտ տեսակի զինամթերք որոշակի թիրախի համար.

- անձնակազմի դեմ՝ բեկորային լիցք,
- զրահապատ մեքենաների դեմ՝ կոմուլյատիվ լիցք,
- շենքի ներսում ոչնչացման համար՝ դանդաղեցված ֆուգասային լիցք

պայթյունի հետաձգմամբ:

Պայթուցիկների մասին գիտելիքները թույլ են տալիս հաշվարկել խոցման շառավիղը, խոցման գոտին երկրորդական գործոններով (կրակ, հարվածային ալիք) և նույնիսկ ընտրել հարձակման անկյունը, որն ապահովում է առավելագույն ազդեցություն:

Լիցքավորման անվտանգությունը

Շատ հաճախ դրոնը լիցքավորվում է «ծնկների վրա»՝ դաշտային պայմաններում, առանց հատուկ սարքավորումների :

Օպերատորին բաժին է ընկնում:

- կտրել պայթուցիչը;
- մշակել բռնկիչը;

- ձեռքով տեղադրել մարտական մասը:

Մեկ սխալ քայլ, և պայթյունը տեղի կունենա հենց ձեռքերում: Միայն պայթուցիկ նյութերի հետ վարվելու իրավասու մոտեցումը կնվազեցնի ինքնապայթեցման ռիսկը:

Իմպրովիզացիա և հարմարեցում

Պատերազմում իդեալական պայմաններ չեն լինում: Զինամթերքը հաճախ պետք է վերափոխվի: Բազային գիտելիքներ ունեցող օպերատորը կարող է.

- սարքավորել ինքնաշեն կոմույաստիվ լիցք;
- նոնակը հարմարեցնել ԱԹՄ-ի վարնետքին;
- վնասված պայթուցիչը փոխարինել նմանատիպով:

Առանց պայթուցիկ նյութերի շահագործման սկզբունքները հասկանալու, դա անհնար է կամ էլ՝ մահացու:

Հետախուզում և ականազերծում

Դրոնի օպերատորը կարող է աշխատել նաև հետախուզության համար՝ որոնել և գտնել ականների և առձգիչների տեղերը : Այսպիսի դեպքերում նա պետք է.

- իմանա ինքնաշեն պայթուցիկ սարքերի տեղադրման նշանները;
- հասկանա պայթուցիկ սարքերի քողարկման սկզբունքները;
- տարբերակի թակարդների տեսակները (սեղմման, առձգման, ռադիոալիքի պայթեցմամբ):

Այս գիտելիքները կյանքեր են փրկում՝ ոչ միայն իրենց թիմի, այլև հետախուզության արդյունքների հիման վրա աշխատող հետևակի:

Աշխատանքը սակրավորների հետ

Լավ պատրաստված օպերատորը դրոնը հենց այնպես չի գործարկում: Նա մարտական խմբի լիարժեք անդամ է : Անհրաժեշտության դեպքում նա կարող է.

- աջակցել օդից սակրավորների գործողություններին;
- վերլուծության համար տեսանյութով ֆիքսել պայթյունի պահը;
- գրագետ փոխանցել վտանգավոր օբյեկտների կոորդինատները և տալ նրանց որակյալ նկարագրությունը:

Եթե օպերատորը սակրավորի հետ խոսում է նույն լեզվով, դա արագացնում և հեշտացնում է համատեղ աշխատանքը:

Եզրակացություն

Դրոնի օպերատորը ջոյսթիքով խաղացող չէ: Սա մասնագետ է, որից կախված է ուրիշների կյանքը: Նրա խնդիրն է ոչ միայն նետել պայթուցիկ լիցքը, այլ դա անել գրագետ, անվտանգ և հնարավորինս արդյունավետ: Առանց պայթեցման գործի հիմունքները իմանալու, նա դառնում է ոչ թե մարտիկ, այլ պատահական սպառնալիք իր իսկ համար: Հետևաբար, օպերատորների վերապատրաստումը պետք է ներառի ականապայթյունային գործի դասընթացներ՝ գոնե բազային մակարդակում:

Աղբյուրը. <https://t.me/VictoryDrones>